

ԱՌԱՔԵԼ ՎՐԴ. ԴԱԻՐԻԺԵՑԻ

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Ժէ Դարի Հայ պատմագիտական ամենանշանաւոր, խորաթափանց ու տաղանդաւոր պատմաբանն է Առաքել Դարբիժեցին, որն իր մտաւոր լուրջ պատրաստութեամբ, իր գիտական հարուստ պաշարով եւ իր պատմագրքի բազմազան, հարուստ եւ զոնադեղ բովանդակութեամբ՝ Հայ վաստակաւոր պատմագիրներ Գրիգոր Դարանաղեցու, Ջաքարիա սարկաւազ Քանաքեցու, Նրեմիա Ձէլէպի Քէօմիւրեանի, Թովմաս Խոջամալեանի, Արրաւհամ Երեւանցու, Արրաւհամ Կրեւանցու, Խաչատուր Զուլալեցու եւ այլ յայտնի գրական մշակների շարքում առաջնակարգ տեղ է զբաղեցնում:

Ժողովրդասէր ու հայրենասէր պատմաբանն իր ժամանակին էլմիածնի միաբանութեանը եւ Հայ ժողովրդին պատիւ բերող այն տրիպար դէմքերից մէկն է, որ երկար տարիների իր անձնուէր, բարեխիղճ եւ բեղմնաւոր գործունէութեամբ փայլել է ո՛չ միայն որպէս լուսաւոր, առաջադէմ հոգեւոր մշակ, այլ իրեն ճարտար ու քաջասիրտ քաղաքիչ եւ տաղանդաւոր պատմագէտ:

Հայ ժողովրդին նրա աւանդ թողած «Պատմութիւն»ը դարաշրջանի Հայ ժողովրդի կեանքի ամենամոայլ եւ յուզիչ պատմութեան էջերը պատկերող հարուստ ու թանկագին շտեմարան է, որի բովանդակութեան զլիւսաւոր եւ էական նիւթերը ձեզ ցարտուն զաղափար են տալիս Շահ-Աբբաս Ա-ի պատերազմական արշաւանքների եւ նուաճումների մասին՝ Օսմանեան դերձխանութեան դէմ. ձեզ ծանօթացնում են նաեւ Աբարատեան նահանգի ժողովրդի բռնադադրի, պարսկական զորքերի դաժան բռնութիւնների եւ Հայ ժողովրդի անասելի հաւածանքների, տառապանքների ու տառապանքների մասին: Պատմութեան մէջ, որոյն տեղ են զբաղում նաեւ Պարսից արքայի մղած վճռական ճակատամարտերը եւ նրա տւերածութիւնները վրաստանում:

Պատմական այդ տրտուր դէպքերի ու անցքերի նկարագրութիւնները, իրենց բազմազան ու զունադեղ բովանդակութեամբ եւ կառուցողական ինքնատիպ արուեստով վկայում են Դարբիժեցու պատմագրական բացառիկ տաղանդի, նրա վարպետութեան ու գրական հմտութեան մասին:

ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻԺԵՑՈՒ ԷԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաքել Դարբիժեցին մէկն է Ժէ Դարի այն գիտակից հոգեւորականներից, որը խորապէս դիտակցելով իր հոգեւոր կոչման ու պարտականութեան, միաժամանակ բարձր գնահատելով էլմիածնի խոշոր դերն ու նշանակութիւնը, ամբողջ հոգով նուիրւում է պատմական վանքի բարեկարգութեան վեհ գործին:

Նա օժտուած լինելով հոգեկան զեղեցիկ յատուկութիւններով եւ ունենալով կրթական

լուրջ պատրաստութիւն, ընդգրկում է մի վեհ խոշալ նուիրումը Հայ ժողովրդին, պատմական էլմիածնին ու Եկեղեցուն եւ սրբութեամբ պահպանել նրանց նուիրական աւանդները: Նա, որպէս ջերմ հայրենասէր, ո՛չ միայն սիրում է Հայ ժողովրդին, այլ եւ ապրում է նրա կրած անլուր տառապանքներով ու խոշտանգումներով. «Ճմլիմ սիրտս մեր, եւ գալարիմ ապի՛մ որսվայնի մերոյ, եւ աչք մեր վտակս արտասուաց

քորեալ իջեցուցանեն, վասն եկելոյ հառնալոյ քշուառութեանն ժողովրդիսն մերոյ»։

Որպէս վաստակաւոր հողեւոր մշակ, նա սիրով եւ նուիրումովեմամբ մասնակցում է նաեւ էլմիածնի մշակութային ու տնտեսական բոլոր հրատապ աշխատանքներին եւ իր լաւագոյնը նուիրում է, որպէսզի միշտ վառ մնայ պատմական վանքի լուսաւոր ջանք։

Մի հանդամանք աւելի արժէքւորւում է նրա հասարակական կերպարը։ Դա նրա հայրենասիրական ջերմ, խորունկ ու պայ-

ծառ ոգին է։ Նա ո՛չ միայն ամբողջ հողով նուիրւում է իր ժամանակի ժողովրդի երջանկութեան վեհ գործին եւ ապրում է նրա ցաւերով ու տառապանքներով, այլեւ տեսնելով Հայաստանի աւերածութիւնները, մահատակածների բռնութիւններն ու հալածանքները, հոգեպէս տանջւում է կսկծալի ցաւով, ինչպէս ինքն է գրում։ «Եւ ես իմ-մէն իսկ տեսանելով զուերս Հայաստան աշխարհիմ, եւ գնաւազին մերոյս ազգին եւ գշարութիւնն մանեմաղակաւաց, կոկծալի մորմուխմար այրիւր սիրտ իմ»։

Կ Ե Ա Ն Ք Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ը

Առաքել Դաւրիթեցու կեանքի պատմութեան մասին փաստական հարուստ տեղեկութիւններ չկան, միայն իր պատմադրքի որոշ էջերում կարգում ենք կենսագրական սեղմ տուեալներ, որոնք պարզում են, որ նա ծնունդ է ժԶ Դարի վերջերին։ Յայտնի չէ նաեւ նրա ծննդեան իսկական թուականը։ Բայց այդ էական հարցը պարզելու համար ունենք մի թանկարէն վաւերագիր, որը կարդալու համար դնացէք էլմիածնի վանքի միաբանութեան դերեքմանոցի հարաւային կողմը եւ կանդ առէք Եփրեմ Կաթողիկոսի գերեզմանի մօտ գտնուող տնշուք, գորշ եւ հասարակ տապանաքարի առջև։ Դա Առաքել Դաւրիթեցու գերեզմանն է, որի վրայ մեւորդեան տառերով քանդակուած արձանադրութիւնը լեզու է առնում եւ խօսում ձեր արդի հետ։ «Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետին միժժԹ (1670) քուինն»(*), Համբ տառերը, իրենց խորհրդաւոր լուծեմամբ վկայում են որ պատմադիրը վախճանուել է 1670 թուականին թերեւս մօտ 70 տարեկան ծեր հասակում։ Հետեւաբար պէտք է ծնուած լինի մօտաւորապէս 1600 թուականին, Դաւրէժ (Թաւրիզ) քաղաքում, ինչպէս ինքը կ'ընէ՝ Դաւրիթեցի։ Պարզենք եւ այն, որ նրա իսկական անունն է Առաքեալ, ինչպէս ինքը

գրում է. «Նուստա եւ տրուպս յամենեսին Առաքեալ կոչւամբս՝ սպասաւոր քանի»։ Նոյնպէս պատմագրքի վերջում Աւետիս գրէ՝ 1666 թուին, ճրեւանում գրած յիշատակարանում Դաւրիթեցուն կոչում է Առաքեալ. «Հնգաքարածառի մօտ, ծախիւմ եւ արդեամբ Առաքեալ վարդապետի, որ է նոյնիմէն այս պատմագրիս շինողն եւ արարողն»։ Բայց պատմագրքը տպողներն Առաքեալը դարձնում են Առաքել. այնուհետեւ այդպէս էլ յիշատակում է Հայ մատենագիրութեան մէջ։

Դաւրիթեցու կեանքի պատմութեան մասին եղած ձեռագիր ու տպագիր տեղեկութիւնները պարզում են, որ նա աւանում եւ կրթւում է իր ժամանակի վերածնութեան գլխաւոր օջախ հանդիսացող էլմիածնում, ուր աշակերտում է լուսաւոր, առաջադէմ եւ շինարար հոգեւորական Փիլիպպոս Կաթողիկոսի մօտ, ապա հողեւոր Կոչումը ընդունելով՝ դառնում է վարդապետ եւ վանքի միաբան։ Էլմիածնում ապրում է մինչեւ իր կեանքի վերջը։ Այդ շրջանում նա վանքում կատարում է դանազան պատասխանատու պաշտօններ, որոնցից յատուկ յիշատակութեան արժանի է նուիրակի պարտականութիւնը. Փիլիպպոս Կաթողիկոսի հրամանով ճանապարհորդում է, ինչպէս ինքն է ասում, «Յովնաց աշխարհում» - Փոքր Առաքալում։ Շրջում է շատ քաղաքներ - Մեքաստիս, Ամասիս, Սպահան-Նոր Զուլաւ.

(*) 1926 Բուխ էրմիտձում արտազննքին Դաւրիթեցու տապանաքի արձանագրութիւնը։

այդտեղից մեկնում է Մծբին (Ուտհա), Հալէպ, Երուսաղէմ եւ այլ վայրեր:

Ամէն տեղ նա նիւթեր է որոնում՝ շատ նեղութեամբ ուսումնասիրում է պատմական տեղեկութիւններ. ժողովում է հնազոյն ձեռագրերի յիշատակարաններ, վաւերագրեր, կոնդակներ, տարեգրութիւններ, ինչպէս նաեւ Հայ եւ հարեան ժողովուրդների կեանքը եւ ժամանակի յուզիչ դէպքերն ու անցքերը պատկերող բազմաթիւ կարեւոր նիւթեր եւ կորսեցր ընդմիջտ փրկուում է Այդ նիւթերով նա աւելի խորացնում է իր պատմական գիտութիւնը: Ապա, իրբեւ նուիրակ փայլուն յաջողութեամբ կատարելով իր առաքելութիւնը, վերադառնում է Էջմիածին:

Փիլիպպոս Կաթողիկոսը եւ Էջմիածնի միաբանները ծանօթանալով Դաւրիթեցու հաւաքած շատ արժէքաւոր նիւթերի բովանդակութեան հետ, խորապէս դիտակցում են որ Շահ Աբբասի բռնազավթի, իշխողների բռնութիւնների, աւերածութիւնների եւ Հայ ժողովրդի ծանր տանջանքների պատմութիւնը, ինչպէս նաեւ ժամանակի տիրող մտայն խառնակ ու տխուր բարքերի պատկերն անհրաժեշտ է գրի առնել եւ յանձնել պատմութեան: Բայց ո՞վ կարող էր նուիրուել այդպիսի ծանր եւ պատասխանատու աշխատանքի: Այդ ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ էր մի հմուտ պատմաբան, պատրաստուած մի կարող գրիչ: Փիլիպպոս Կաթողիկոսը գիտում է իր յառաջագէմ եւ լաւագոյն աշակերտներին, բայց նրանցից ոչ մէկը յանձն չի առնում: Եւ վեհափառը հրամայում է ու հարկադրում Դաւրիթեցուն գրել պատմութիւնը: Եւ նա նման էյոթնաշխատ եւ գրագրանքի եւ գտածանքի գործը յանձն է առնում Կաթողիկոսի «անեղ հրամանով» եւ իր մեղքերից ազատուելու համար. «Վասն զի եւ ես այսու դիտաւարութեամբ եւ յուսով յամեն առիդսայիս յոթնաշխատ եւ գրագրանքի եւ գտածանքի գործը»:

Դաւրիթեցին իր պատմութիւնն սկսում է 1651 թուականին, բայց Փիլիպպոս Կաթողիկոսի մահից յետոյ, որոշ դժուարութիւնների պատճառով, ամբողջ եօթը տարի

թողնում է իր աշխատանքը: Այնուհետեւ 1658 թուականից, Յակոբ Կաթողիկոսի հրամանով շարունակում է նորից գրել եւ 1662 թուին վերջացնում է եւ Հայ ժողովրդին աւանդ է թողնում 60 տարուայ պատմութիւն, որ իր հիմնական բովանդակութեամբ ընդգրկում է 1602-1662 թուականները:

Հարց է առաջանում, թէ Դաւրիթեցին ինչպիսի՞ պայմաններում գրում է իր դիրքը: Նա իր պատմութեան վերջին գլխում այդ կարեւոր խնդիրը մասամբ լուսաբանում է: Տաժանելի աշխատանքը նա կատարում է ո՛չ թէ առոյգ երիտասարդութեան շրջանում, այլ ողորմելի ծերութեան օրերին, գրում է ցաւալար մարմնով, երբ ձեռքերը թուլանում են եւ աչքի լոյսը պակասում է: Անա իր վկայութիւնը. «Այլ դիպեցաւ պատանի ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առջգ երիտասարդութեան, այլ յազարմի ծերութեան, վասնզի ծեր էի, մանկ յոյժ ցաւալար մարմնով, եւ ի լուսն աչքս պակասեալ եւ ի պնդութենէ ձեռքս քուլացալ դադայր»:

Չնայած իր ֆիզիքական տկարութեան՝ Դաւրիթեցին ինը տարուայ ընթացքում պատուով վերջացնում է իր աշխատանքը եւ Հայ պատմագրութեան յանձնում մի թանկագին ձեռագիր մատեն, որի ճակատին կարգում ենք. «Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրիթեցոյ: Սակս դիպուածոց Հայաստանայց եւ եւս գաւառին Արարատոյ՝ ի թւոյն Հայոց 1054-ին, մինչեւ յաւարտ պատմագրութեանս...»:

Ժէ Դաւրմ Շահ Աբբաս Ա-ի արշաւանքների, նրա մղած պատերազմների Օսմանցիների դէմ, Արարատեան նահանգի ժողովուրդի գերեմարութեան, Հայ ազգի կրած աշտանելի հալածանքների եւ ժամանակի պատմական գլխաւոր անցքերի ու դէպքերի ուսումնասիրութեան համար Դաւրիթեցու վստասելը պատմադրական մի գանձարան է:

Պատմադիրքն առաջին անգամ լոյս է տեսնում իր կենդանութեան ժամանակ՝ 1669 թուականին, Ամսդերտամում, Ոսկան Վրդ. Երեւանցու տպարանում, նրա ծախքով

ու սրբազրույթեամբ: Երկրորդ անգամ հը-
րատարակում է Ֆրանսերէն լեզուով,
Brosset-ի Թարգմանութեամբ, բազմաթիւ
ծանօթութիւններով եւ տպւում է Սէն-Բե-

զերբուրում, 1874 թուին, երրորդ հրա-
տարակութիւնը կատարւում է 1884ին էլ-
միածնում: Զորքորդ անգամ լոյս է տեսնում
1896 թուին, նորից էլ միածնում:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Դաւրիժեցու վաստակն, իր մի շարք հա-
կան առանձնաշատկութիւններով, միանգա-
մայն նորութիւն է Հայ ժողովրդի պատմու-
թեան մէջ եւ բացառիկ արժէք ունի նաեւ
իրանահայութեան համար:

Պատմադիրքը կարեւորագոյն աղբիւր է
ո՛չ միայն Հայաստանի, այլեւ Անդրկովկաս-
եան ժողովուրդների եւ պարսկա-թրքա-
կան պատերազմների պատմութեան ուսումն-
նասիրութեան համար:

Բայց մի հանգամանք աւելի արժէքաւո-
րում է Դաւրիժեցու պատմագիտական ցալ-
տուն կերպարը եւ նրա կառուցողական ար-
ուեստի վարպետութիւնը: Անժխտելի իրա-
կանութիւն է, որ 1603-4 թուականներին
պատմաբանը 5-6 տարեկան լինելով՝ իր նը-
կարագրած պատմական շատ դէպքերին,
գլխաւորապէս Շահ Աբբասի արշաւանքնե-
րին, Հայ ժողովրդի գերեզմարութեանը, Վը-
րաստանի աւերումներին եւ այլ ողբերգա-
կան անցքերին ակնատես չի եղել, բայց
հետագայում օգտագործելով ձեռագիր հին
թղթերն ու յիշատակարանները, կաթողի-
կոսական կոնդակները, ինչպէս նաեւ իր
ձանապարհորդութեան չրջանում գրի առած
Հայ եւ օտար պատմողների տեղեկութիւն-
ները, նաեւ իր ժամանակում տեղի ունեցած
դէպքերը, ներութեամբ զգաւորել է եւ
ինքնատիպ արուեստով, պատմիչաւոր նը-
կարագրութիւններով եւ այնքան հմտու-
թեամբ է կառուցել իր պատմութեան բո-
վանդակութիւնը, որ կարողմ էք ո՛չ միայն
առանձին հետաքրքրութեամբ, այլեւ այն-
պիսի ապաւորութիւն ստանում՝ որ պատ-
մադիրն իր արձանագրած բոլոր դէպքերին
սպիանատես է եղել:

Պատմութեան գեղեցիկ էջերն են կազ-
մում Հայ մշակոյթի թանկագին ձեռագրե-
րի յիշատակարանների արձանագրութիւն-
ները, որոնք վկայում են որ Դաւրիժեցին

բարձր է գնահատել գրիչների թողած գրա-
կան գանձերը:

Նշանակելի է, որ ժէ Դարի էլ միածնի
հոյեւորականների մէջ Դաւրիժեցին փա-
լել է իր զեղարուեստական նուրբ ճաշակով:
Նա խորապէս գիտակցելով նկարչական ար-
ուեստի խոշոր դերին ու նշանակութեան՝
ժողովրդի զեղարուեստական ճաշակի զար-
գացման խնդրում, իր պատմութեան մէջ
ուրոյն էջեր է նուիրել Նոր Զուգայի ժողո-
վրդի սյարանները հանդիսացող ժէ Դարի
տաղանդաւոր արուեստագէտներ Մինաս եւ
Յակոբեան նկարիչներին: Բայց նրա հա-
ղորդած կենսագրական տուեալները, դժ-
բախտաբար, շատ թերի են. նա ո՛չ միայն
չի յիշատակել վարպետ նկարիչների ազգա-
նունները, այլեւ չի գէժել նրանց միմեկի
ստեղծագործութիւնները գտնէ՝ սեղմ պատ-
կերը: Այդ երեւոյթով էլ պիտի բացատրել
որ պատմաչըրանի այդ առաջնակարգ ար-
ուեստագէտների կեանքի եւ նկարչական
գործունէութեան հիմնական էջերը մինչեւ
օրս մնացել են անյայտութեան մէջ:

Պատմադիրքի բովանդակութեան զեղար-
ուեստական տպաւորութիւնը խորացնում
են նաեւ Հայաստանի ճարտարապետական
հոյակապ կոթողների՝ էլ միածնի, Հոսիսի-
մէ եւ Գալիսիէ պատմական վանքերի՝ Փի-
լիպպոս Կաթողիկոսի ազնիւ ջանքերով կա-
տարւած նորոգութիւնները եւ շինարարակա-
նախառններին նկարագրութիւնները: Շի-
նարար վեհափառին պարտական ենք նաեւ
Ս. Մեսրոպի գերեզմանի վրայ կառուցուած
Օշականի եկեղեցին. «Բազում ծախիւ եւ
աշխատութեամբ, խրատեալ Բարի եւ մա-
ծուցեալ կրպի»: Կաթողիկոսը նորոգում է
եւ կառուցում բազմաթիւ եկեղեցիներ եւ
վանքեր:

Դաւրիժեցին իր պատմութեան մէջ դը-
ծել է նաեւ ժամանակի մի շարք ազնիւ ու

տիպար հոգեւորականների կերպարները, որոնք նշանակալից դեր են կատարել ժողովրդի երջանկութեան համար:

Դաւրիժեցին միաժամանակ իր ժամանակի լաւագոյն քննադատն է: Իր պատմագրութեամբ պատկերել է ժամանակի հոգեւոր դասի եւ Հայ Եկեղեցու անարժան, անպարտաճանաչ պաշտօնեաների կերպարները եւ նրանց թերութիւններն ու պակասութիւնները: Անխնայ քննադատել է նիւթապաշտ եւ եսասէր հոգեւորականների տգիտութիւնը, խաւարամտութիւնը, խորամանկութիւնը, կաշառակերութիւնը, նրանց շահամոլութիւնն ու ազահուսթիւնը:

Խոր վշտով նկարագրել է նաեւ բարձրաստիճան հոգեւորականների՝ պատրիարքների եւ կաթողիկոսների անմիաբանութիւնն ու դաւերը, յատկապէս նրանց շողոքօրթութիւնն ու քննողութիւնը Պարսիկ արքաների եւ խաների առջեւ:

Աւելի անմիթարական է դիւզական հոգեւորականների կեանքի պատկերը. նրանք մոռանալով իրենց հոգեւոր կոչումը, ժամն ու պատմաագրը, աշխարհիկ կեանք են վարում, իսկ վանականները՝ «Եւ գնալիրեալ տեղիս Աստուծոյ ... լցեալ էին գայմոսիկ կանամբք եւ տանդիկմօք, եւ իւրեանց ազգայնօք»:

Պատմութեան մէջ ուշագրաւ տեղ են դրաւուում նաեւ ժէ Դարի քաղաքական ծանր

եւ մռայլ դէպքերի եւ պատերազմների հետեւանքով առաջացած սովի, հրդեհի, տւււրումների եւ այլ պատահարների յուզիչ նկարագրութիւնները, որոնք ձեռք ծանօթացնում են ժամանակի ժողովուրդների տառապանքների եւ նրանց հոգեկան ծանր ապրումների մասին:

Դաւրիժեցու պատմագրական արուեստով վարպետութեան մասին վկայում են պատմագրի սքանչելի պատկերաւոր նկարագրութիւնները, որոնք գրական գոհարներ են: Այդպէս է Հին Ջուղայի Հայութեան կողմից Շահ Աբբաս Ա արքայի այնքան ջերմ ընդունելութեան ու մեծարանքի նկարագրութիւնը:

Դաւրիժեցու պատմագրի ամենայն դիչ էջերը կաղմում են 1604 թուականին Հայ ժողովրդին՝ իր բնակավայրից տեղահանութեան զարհուրելի նկարագրութիւնները: Չնայած Հին Ջուղայի Հայութեան փառահեղ ընդունելութեան եւ հիւրասիրութեան, Շահ Աբբասը համարում է Արտաթեան դաշտի եւ նրա սահմանակից իրեն ենթակայ բոլոր դաւառների բնակիչներին դաղթեցնել Պարսկաստան: Դաւրիժեցին պատմաբանի խոր հմտութեամբ պատկերել է տարաբախտ ժողովրդի Արաքս գետն անցնելու սարսափելի եւ սրտաճմլիկ տեսարանը:

ՊԱՏՄԱԳՐՔԻ ԷԱԿԱՆ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դաւրիժեցու պատմութեան բովանդակութիւնը բացառիկ արժէք կ'ունենար, եթէ նա Իրանահայութեան պատմական անցեալի մասին լուսարանէր մի շատ կարեւոր հարց, թէ նախքան Շահ Աբբասի դերակալութիւնը՝ Իրանում եղե՞լ են Հայեր:

Միանգամայն սխալ է այն տեսակէտը, թէ Իրանում Հայերը հաստատուել են Շահ Աբբաս Ա-ի ժամանակ:

Պատմութիւնից յայտնի է, որ դեռ Դ Դարում, Շապուհի կողմից Պարսկաստան են ջրուել Իրանեակ հազարաւոր Հայ գաղթականներ: Այնուհետեւ, ԺԱ-ԺԸ Դարերում, Պարսիկ իշխողները մտնում են Հայ

յաստան, կողոպտում են ժողովրդին եւ տասնեակ հազարներով Հայերին բռնի դնում վարում հարաւային Սպահանի մօտիկ շրջանները:

Իրանահայ գաղթականութեան մասին փաստական տեղեկութիւններ կարգում ենք նաեւ ԺԲ-ԺԴ Դարերի հայկական ձեռագիր յիշատակարաններում: Ժամանակի Հայ պատմիչներն ու ժամանակագիրները ԺԴ-րակոս Դանձակեցի, Արիստակէս Լաստիվերացի, Թովմա Մեծօփեցի, Հայ ժողովրդի Հայաստանից դէպք Պարսկաստան դաղթի մասին արձանագրել են թանկագին տեղեկութիւններ:

Տաղանդաւոր պատմաբան Փրօֆ. Աշոտ Արբաճամեանի վկայութեամբ՝ պարսկահայ գաղթօջախներն աւելի մեծանում եւ Պարսկաստանի տնտեսական կեանքում խոշոր դեր են խաղում մոնղոլական տերապետութեան շրջանում (1220-1385)։ Այդ ժամանակ Իրանահայերն իրենց մէջ ընդունում են Հայաստանից եկած գաղթականական նոր հոսանքներ։

Փրօֆ. Արբաճամեանն աւելի խորացնելով իր արժէքաւոր ուսումնասիրութիւնը, արձանագրել է թէ ժ. Գ. Դարի մոնղոլական դիրքաւորութեան շրջանում, Հայաստանում ստեղծուած ծանր պայմանները, բազմաթիւ Հայ առեւտրականների եւ արհեստաւորների ստիպում են Հայաստանից տեղափոխուել Պարսկաստան եւ Հաստատուել տարբեր քաղաքներում՝ Թաւրիզում, Սուլթանիէում, Մարանդում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում, Ռաշտում եւ այլ վայրերում, որտեղ նրանք, չնորհիւ իրենց ուշիմութեան եւ աշխատասիրութեան, տնտեսական ուղադրաւ նուաճումներ են աւելում։

Ունենէք մի այլ թանկագին աղբիւր։ Դա 1345 թուականի հայկական մի ձեռագրի յիշատակագիր՝ Ներսէս զրիչն է, որը վկայում է թէ Թաւրիզն ո՛չ միայն Պարսիկնե-

րի, այլ եւ Հայերի մայրաքաղաքն է։ Այդ երեւոյթը վերլուծելով՝ Փրօֆ. Աշոտ Արբաճամեանը եղբակցանում է, թէ ժ. Գ. Դարիում բազմաթիւ Հայեր, մեծ մասամբ արհեստաւորներ ու առեւտրականներ, կեդրոնացել են Դաւրէժ քաղաքում, ուր դրուում մի շարք ձեռագրերից տմենահինը համարւում է 1334 թուականին Սարգիս զրիչ ընդօրինակած մատենանք, որի յիշատակարանում կարդում ենք Ս. Սարգիս եւ Ս. Աստուածածին եկեղեցիների անունները։

Շահ Աբրահիմ գերեվարութեանից առաջ Սպահանում Հայ համայնքի գոյութեան մասին Նոր Ջուղայի պատմագրքում կարդում ենք. «Ի հանգստարանիս Ջուղայու կամ Բանի մի տապանաբարիմ, որոց քաւականն է հազար, որք յիսունչորս ամօք յաւաջ են Բան զՋուղայու հիմնարկութիւն»։

Ընդդժուած շատ արժէքաւոր եւ էական նիւթերի արձանագրութիւնները Դաւրիժէցու պատմագրքում ո՛չ միայն պակասում են, այլ եւ նա իր աշխատութեան էջերը զարդարել է երկրորդական այնպիսի նիւթերով, որոնք պատմական արժէք չունեն եւ թուլացնում են պատմագրքի բովանդակութեան տպաւորութիւնը։ Այդ նիւթերից են գրքի ամբողջ 53 եւ 54-րդ գլուխները։

Լ Ե Զ Ո Ի Ն Ե Ի Ո Ճ Ը

Դաւրիժէցու պատմութիւնը գրուած է աշխարհաբարախառն զրարարով։ Լեզուն յստակ է, մշակուած, ճոխ եւ պատկերաւոր, իսկ ոճը կուռ է եւ կտրուկ։ Ամենակարեւորը՝ ճոռոմ արտայայտութիւններով ու նը-

կարագրութիւններով չի մթալանել պատմութեան բովանդակութիւնը, այլ պարզութիւնն ու մաքրութիւնը իրար են ներդաշնակում եւ առանձին երանդ են տալիս պատմագրքի կառուցողական արուեստին։

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Ժէ Դարի Հայ պատմագրութեան մեծ արուեստագէտն է Առաքել Դաւրիժեցին, որի ստեղծագործութեան մէջ պատկերանում են Հայ ժողովրդի պատմութեան ամենայնուրեւ եւ ղրդրդական էջերը։ Այդ պատմութիւնը բացառիկ արժէք ունի այն տեսակէտից, որ այնտեղ փաստակոն շատ արժէքաւոր տեղեկութիւններ էք կարդում Հայաս-

տանի դաւաճներում ու քաղաքներում տեղի ունեցած տխուր դէպքերի եւ Հայ ժողովրդի անպատմելի տառապանքների մասին։

Պատմութեան հիմնական առանցքն են կալովում դաւաշըլանի պատմական անցքերը՝ Պարսկաստանեան պատերազմական դէպքերը, Շահ Աբրահիմ բռնադատելը, Օսմանեան պետութեան ծանր հարկերի տակ

ճնշուող ու տառապող ժողովուրդների դժբախտությունը, ժամանակի մշակութային եւ գեղարուեստական շարժման պատկերը եւ այլ ուշադրաւ երեւոյթներ:

Պատմագրքի բովանդակութեան նշանակութիւնն արժէքաւորում են նաեւ հարեւան ժողովուրդների քաղաքական կեանքին ներդրումը: Պատմագիրը խոր յուզումով նկարագրել է այն զարհուրելի աղէտներն ու աւերումները, որ Շահ Աբբասը գործադրել է Վրաց աշխարհում:

Պատմութեան մէջ հանդէս են գալիս նաեւ դարաշրջանի Հայ հոգեւորականները՝ իրենց էական յատկութիւններով եւ բարոյական կենցաղով: Դաւրիժեցին վարպետ վրձինով նկարել է նրանց ցայտուն կերպարները:

Դաւրիժեցու պատմագրքում խորացող ուշադիր ընթերցողը շատ արժէքաւոր տեղեկութիւններ է գտնում: Դրանցից ընդդէմէք Շահ Աբբասի բռնապաշտի սկզբնական շրջանի պատմութեան լուսարանութիւնը: Այդ փաստական վաւերագիրը պարզում է, որ նախքան Հայ ժողովրդի դաշխը, թրջական ծանր հարկերի տակ ճնշուող Հայ, Վրացի եւ Քիւրտ ժողովուրդների գլխուտը առաջնորդները օսմանեան բռնակալ իշխանութեան անասելի տանջանքներից, բռնութիւններից եւ ծանր հարկերից ազատուելու նպատակով գնում են Պարսկաստան եւ Շահ Աբբասին նկարագրելով ժողովուրդի ողբերգական դրութիւնը, խնդրում են նրան՝ ժրկել թրջական դաժան լծից: Շահը նրանց շատ սիրով է ընդունում, ապա կազմակերպելով իր զորաբանակը, արշաւում է Թուրքերի վրայ եւ կարճ ժամանակում գր-

բաւում Թուրքիը, Հին Զուղան, Նախիջևանը եւ Երեւանը:

Կայ մի նշանակալից երեւոյթ եւս. Դաւրիժեցին իւրացնելով Հնագոյն պատմագիրների ստեղծագործական արուեստի լաւագոյն աւանդները, բազմազան ու գունագեղ նկարագրութիւններով խորացրել է Հայ պատմագրութեան բովանդակութիւնը, զարգացման նոր եւ բարձր աստիճանի հասցնելով իր պատմագրիչը, որը տողորուած է ջերմ եւ խորունկ հայրենասիրութեամբ ու ժողովրդասիրութեամբ:

Գիրքը բացատիկ արժէք ունի նաեւ այն տեսակէտից, որ մեծ մասամբ կառուցուած է յիշատակարանների, պատմական վաւերագրերի, կոնդակների եւ պատմագրի հաւաքած այլ աղբիւրների վրայ:

Մի հանգամանք այժմ պարզ է, որ Առաքել Դաւրիժեցու արժէքաւոր վաստակը Ժի Դարի Հայ ժողովրդի կեանքը յուզող դաժան եւ աննկարագրելի դէպքերի ու անցքերի ուսումնասիրութեան համար շատ արժէքաւոր եւ թանկագին աղբիւր է եւ մի հարուստ հանրագիտարան: Թերեւս այդ երեւոյթներով պիտի բացատրել, որ գիրքը կարգացւում է առանձին սիրով եւ հետաքրքրութեամբ:

Ահա թէ ինչո՞ւ Դաւրիժեցու անունը քանդակուած է ո՛չ միայն Հայ պատմագրութեան, այլեւ սերունդների սրտերում: Ապագայ պատմաբանները, բանասէրները, գրականապէսները եւ մտաւորականները եւրասիական տեղիներում ջերմ զգացումներով պիտի կարդան նրա Հոյակապ եւ արժէքաւոր պատմութիւնը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ